https://doi.org/10.46991/hc.2025.si1.122

Functions of Armenology in the Era of Globalization

Gevorg Khoudinian
https://orcid.org/0009-0002-5922-6875
Editor of "Vem" journal, Doctor of Historical Sciences
khoudinyan@yahoo.com

Keywords - Armenology, globalization, historical necessity, historical comparative method, clinical death, cognitive war, progressive goals, global region, civilizational function.

Currently, Armenology has turned into a scientific worldview based on an integral understanding of the results of specific sciences about Armenia and Armenians, which, of course, does not have its own theory and method, but in a new competitive environment it can overcome foreign views about Armenia and Armenians formed from the outside by way of transformation of the Armenian view integrated within the independent state. Therefore, the task of the state operating in a new competitive environment is to form a management system of Armenology, an Armenology system, in order to scientifically substantiate and solve the tasks of self-knowledge, self-preservation, self-reproduction and self-expression of both its own citizens and at an appropriate level.

Until now, Armenology had four main functions: scientific-cognitive, didactic-educational, formation of values and development on its own basis, and protection and propaganda. In the present article, we have come to the conclusion that a fifth, civilizing function should be added to them.

The reason is that the discovery and consolidation of the historical nucleus of Indo-Europeans, from India and Iran to the Romano-Germanic world, can resist the "Turan" project, which has been challenging the world civilization for a long time, which will allow to neutralize the opportunities of the Turan project to become a global region. Such a perspective has its geopolitical and economic aspect, the India – Iran – Armenia – Georgia - Europe communication axis, which, can be considered as a scientific task of discovering the cultural commonalities of the Indo-European or Aryan peoples.

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 122-132.

Received: 08.11.2024
Revised: 06.02.2025
Accepted: 28.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Հայագիտության գործառույթները գլոբալիզացիայի դարաշրջանում

Գևորգ Խուդինյան
«Վէմ» հանդեսի խմբագիր, պ.գ.դ.

Հիմնաբառեր - հայագիտություն, գլոբալիզացիա, պատմական անհրաժեշտություն, պատմահամեմատական մեթոդ, կլինիկական մահ, կոգնիտիվ պատերազմ, առաջանցիկ նպատակներ, գլոբալ ռեգիոն, քաղաքակրթական գործառույթ։

Ներկայումս հայագիտությունը վերածվել է Հայաստանի ու հայության մասին կոնկրետ գիտությունների արդյունքների ինտեգրալ ընկալման վրա հիմնված գիտական աշխարհայացքի, որն, անշուշտ, չունի սեփական տեսությունն ու մեթոդը, բայց մրցակցային նոր միջավայրում կարող է հակազդել Հայաստանի ու հայության մասին օտար հայացքներին՝ անկախ պետականության ներսում բյուրեցող հայկական հայացքի միջոցով։ Ուստի, մրցակցային նոր միջավայրում գործող պետության խնդիրը հայագիտության կառավարման համակարգի՝ հայագիտական համակարգի ձևավորումն է՝ ինչպես իր, այնպես էլ սեփական քաղաքացիների ինքնաճանաչողության, ինքնապահպանման, ինքնավերարտադրության և ինքնադրսևորման առաջադրանքները գիտականորեն հիմնավորելու և պատշաճ մակարդակով լուծելու համար։

Մինչ օրս հայագիտությունն ուներ չորս հիմնական գործառույթներ՝ գիտաճանաչողական, դիդակտիկ-ուսուցողական, արժեքների ձև ավորման ու սեփական հիմքի վրա զարգացման և պաշտպանության ու քարոզչության։ Ներկա հոդվածում մենք հանգել ենք այն եզրակացությանը, որ դրանց պետք է գումարել հինգերորդ՝ քաղաքակրթական գործառույթը։

Պատճառն այն է, որ ներկայումս համաշխարհային քաղաքակրթությանը մարտահրավեր նետող «Թուրան» նախագծին կարող է դիմակայել հնդեվրոպացիների պատմական միջուկի բացահայտումն ու համախմբումը՝ Հնդկաստանից ու Իրանից մինչև ռոմանա-գերմանական աշխարհ, որը թույլ կտա չեզոքացնել Թուրան նախագծի՝ գլոբալ ռեգիոնի վերածվելու հնարավորությունները։ Նման հեռանկարն ունի իր աշխարհաքաղաքական ու տնտեսական ասպեկտը՝ Հնդկաստան-Իրան-Հայաստան-Վրաստան-Եվրոպա կոմունիկացիոն առանցքը, որը կարելի է դիտարկել որպես հնդեվրո-

պական կամ արիական ժողովուրդների մշակութային ընդհանրությունների բացահայտման գիտական առաջադրանքի հիմք:

Функции арменоведения в эпоху глобализации

Геворк Худинян
Редактор журнала «Вэм», д.и.н.

Ключевые слова - арменоведение, глобализация, историческая необходимость, историко-сравнительная метод, клиническая смерть, когнитивная война, опережающие цели, глобальный регион, цивилизационная функция.

В настоящее время арменоведение превратилось в научное мировоззрение, основанное на интегральном восприятии результатов конкретных наук об Армении и армянстве, у которого, безусловно, нет собственной теории и метода, но в новой конкурентной среде может противостоять иностранным взглядам на Армению и армянство с помощью армянского взгляда -формирующегося внутри независимой государственности. Следовательно, задачей государства, действующего в новой конкурентной среде, является создание системы управления арменоведением, арменоведческой системы, для научного обоснования и решения задач самопознания, самосохранения, самовоспроизводства и самовыражения как для внешнего мира, так и для собственных граждан.

До сегодняшнего дня арменоведение выполняло четыре основные функции: научно-познавательную, дидактико-преподовательскую, формирования сохранения и развития ценностей на собственной основе, и защиты и пропаганды. В настоящей статье мы пришли к выводу, что к ним следует добавить пятую, цивилизационную функцию.

Причина в том, что в настоящее время проекту «Туран», бросающему вызов мировой цивилизации, может противостоять выявление и консолидация исторического ядра индоевропейцев – от Индии и Ирана до романско-германского мира. Это позволит нейтрализовать возможности превращения проекта «Туран» в глобальный регион. Подобная перспектива имеет свой геополитический и экономический аспект – коммуникационный ось Индия-Иран-Армения-Грузия-Европа. Этот проект можно рассматривать и как научную задачу выявления культурных общностей индоевропейских или арийских народов.

* * *

Մուտք: Որպես հայագիտության տեսական հիմնախնդիրների վերաբերյալ 2004 թ. «21-րդ դար» ամսագրում երկու մասով հրապարակված «Հայագիտությունը 21-րդ դարում» ծրագրային ուսումնասիրության հեղինակ՝ մեզ անցած 20 տարիներին հետաքրքրում էր ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի պատվիրած ու էլեկտրոնային եղանակով լայնորեն տարածված, հայագիտության յուրահատուկ այցեքարտի վերածված այս ամբողջական նախագծի հետագա ճակատագիրը [Խուդինյան, 2024]:

Այսօր՝ 2024 թ. արձանագրում ենք, որ ՀՀ կառավարության սեփականությունը դարձած այդ մոտ հիսուն էջանոց համապարփակ ծրագրում առկա վատատեսական կանխատեսումներն իրականություն են դարձել, իսկ Հայաստանի հայագիտությունը անկախ պետականության նոր իրողություններին համապատասխանեցնելու առաջարկություններն անտեսվել են: Ավելին, հայագիտության հիմնախնդիրների վերաբերյալ մեզանում վերջին տասնամյակներին լույս տեսած հրապարակումների ճնշող մեծամասնությունն կոնկրետ ոլորտներին վերաբերող աշխատանքային փաստաթղթի բովանդակություն է ունեցել: Անգամ ՀՀ ԳԱԱ համապատասխան ծրագրերի ու կառավարության ընդունած ռազմավարության ներածական բաժինները հայեցակարգային առումով սահմանափակվել են մի քանի ընդհանուր ձևակերպումներով, որոնք ծառայում են սոսկ որպես գեղեցիկ զարդեր՝ խորհրդային իներցիայով շարունակվող պարապուրդն ու կրկնությունները քողարկելու համար: Ուստի, անցած տարիներին շարունակելով արձանագրել առաջարկվող հայեցակարգի արդիականությունը և անկախ պետականության պայմաններում նրա ամբողջական նորույթ լինելու իրողությունը, նման մոտեցումը բացատրել ու հիմնավորել ենք 21-րդ դարի սկզբունքորեն նոր մարտահրավերները հաշվի առնելու անհրաժեշտությամբ:

Ավելին՝ 2004 թվականին, երբ գլոբալիզացիայի անկասելի ընթացքը դեռևս չէր թափանցել մեր կյանքի բոլոր ոլորտները, իսկ հայեցակարգային ու մեթոդաբանական մոտեցումներից զուրկ հայաստանյան հայագիտությունը շարունակում էր դոփել իր տեղում, մենք կանխատեսել էինք գլոբալիզացիայի պատմական անհրաժեշտությունը և ներկայացրել հայագիտական համակարգը դրան համապատասխանեցնելու կոնկրետ ծրագիր: Ուստի, ներկա հրապարակման մեջ գիտական հետազոտության պատմահամեմատական մեթոդի կիրառման միջոցով նպատակ ունենք հայագիտության 2024 թ. վիճակը համեմատել 20 տարի առաջ առկա իրողությունների հետ, որպեսզի բացահայտենք պետական պատվերով ստեղծվող, ֆինանսավորվող, բայց այդպես էլ իրականություն չդարձող ծրագրերի անտեսման ու գիտական գործունեության նմանակումների շարունակման պատճառները և նախանշենք առկա փակ շրջանակը

հաղթահարելու ուղիները: Մյուս կողմից՝ հաշվի առնելով հաջորդ 20-ամյակում մեր երկրին ու ժողովրդին սպառնացող նոր մարտահրավերները, փորձելու ենք հիմնավորել այն մտահոգությունը, որ Հայաստանի իշխանությունների ու հայագետների կողմից արտաքին ճակատում ներկայումս որդեգրված երկու հիմնական գիտաքաղաքական մոտեցումները գլոբալիզացիայի պայմաններում հավասարապես փակուղային են և անգամ՝ վնասակար:

Մեր հայեցակարգային մոտեցումները: Ներկայումս հայագիտությունը վերածվել է Հայաստանի ու հայության մասին կոնկրետ գիտությունների արդյունքների ինտեգրալ ընկալման վրա հիմնված գիտական աշխարհայացքի, որն, անշուշտ, չունի սեփական տեսությունն ու մեթոդը, բայց մրցակցային նոր միջավայրում կարող է հակազդել Հայաստանի ու հայության մասին օտար հայացքներին՝ անկախ պետականության ներսում բյուրեցող հայկական հայացքի միջոցով: Ուստի, մրցակցային նոր միջավայրում գործող պետության խնդիրը հայագիտության կառավարման համակարգի՝ հայագիտական համակարգի ձևավորումն է՝ ինչպես իր, այնպես էլ սեփական քաղաքացիների ինքնաճանաչողության, ինքնապահպանման, ինքնավերարտադրության և ինքնադրսևորման առաջադրանքները գիտականորեն հիմնավորելու և պատշաճ մակարդակով լուծելու համար:

Համեմատելով 2004-ին կատարված մեր դիտարկումները ներկա իրողությունների հետ և արձանագրելով, որ մինչ օրս հայագիտությունն ուներ չորս հիմնական գործառույթներ՝ գիտա-ճանաչողական, դիդակտիկ-ուսուցողական, արժեքների ձևավորման ու սեփական հիմքի վրա զարգացման և պաշտպանության ու քարոզչության, մենք հանգել ենք այն եզրակացությանը, որ դրանց պետք է գումարել հինգերորդ՝ քաղաքակրթական գործառույթը, որի անհրաժեշտության հիմնավորումը կտրվի սույն հրապարակման վերջում:

Որովհետև եթե 2004-ին մենք պնդում էինք, որ գլոբալիզացիայի արդյունքում ձևավորվող մրցակցային նոր միջավայրում ծավալվող ինտեգրացիան «Ստեղծում է ազգային շահերի ընկալման հորիզոնական և ուղղահայաց դիտանկյունների վրա հիմնված մի նոր վիրտուալ իրականություն» [Խուդինյան Գևորգ, «21-ՐԴ ԴԱՐ» Ե, 2004, N 3, էջ 24], ապա 2024 թվականին դրան հավելում ենք հետևյալ եզրահանգումը. թեև ինտեգրացիան արդեն կատարված փաստ է, բայց բարեբախտաբար, դա չի հանգեցրել միատարրացման (ունիֆիկացիայի) եւ համահարթեցման, ինչի մասին ժամանակին ահազանգում էին մեր ընդդիմախոսները: Ընդհակառակը՝ տեղի է ունեցել այն, ինչը կանխատեսել էինք 20 տարի առաջ՝ ազգային շահերի ընկալման տարածա-աշխարհագրական հարթությանը զուգահեռ մեծացել է 2004-ին մեր կողմից սահմանված «ազգ-արժեք» հասկացության դերակատարությունը: Որովհետև գլոբալիզացիայի համար հատկանշական է ժամանակի ընդարձակումն ու տարածության սեղմումը, ինչը

հանգեցնում է նրան, որ ազգային շահերը, այսինքն՝ պետության գիտակցված պահանջմունքները, ավելի հաճախ հետապնդվում են ոչ թե հորիզոնական-տարածքային, այլ ուղղահայաց-արժեքային հարթությունների վրա, ուստիև գլոբալ մրցահարթակներում առաջին պլան է դուրս գալիս ազգի մտավոր-ինտելեկտուալ ներուժի իրացման խնդիրը:

Նման պայմաններում պետության գիտակցված պահանջմունքների համատեքստում հայագիտության գործառույթները վերածվում են ճանաչողությունից բխող, գիտելիքի և քաղաքականության կոնկրետ ոլորտից բխող, ռազմավարական առաջադրանքի «պետական ժամադրության» հիմքի վրա իրականացվող դերաբաշխումների հարաշարժ (դինամիկ) գործընթացի, որում երկրի արտաքին քաղաքականությունը, տնտեսությունն ու պաշտպանունակությունը որոշակի կախման մեջ են հայտնվում սեփական հոգևոր և նյութական արժեքների ճանաչողության, ուսուցման, պահպանման, պաշտպանության և ճիշտ մատուցման առաջադրանքից:

Ժամանակի ու միջոցների աննպատակ վատնումի պատճառները: Քանի որ պետության գիտակցված պահանջմունքների իրացման համատեքստում Հայաստանի անկախացումից հետո անցած տարիներին գործ ունեինք սոսկ հետխորհրդային լեգիտիմության վրա հիմնվող իշխանական համակարգի հետ, այդ ընթացքում նրա պահպանողական իներցիային համապատասխանող հայագիտությունը կոնսերվացված վիճակից փոխադրվեց կլինիկական մահվան դրության: Դրա մասին են վկայում հետևյալ իրողությունները՝

Առաջին՝ հայագիտության գիտա-ճանաչողական գործառույթի, այսինքն՝ ժամանակի գիտատեսական մտքի մակարդակին համապատասխանող գիտական գիտելիքի փաստացի բացակայությունը փոխարինվեց քայքայվող համակարգից սահմանազատված ու ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ գտած առանձին հայագետների ստեղծված օգտակար գիտելիքներով, որոնք ընկալելի են հումանիտար գիտությունների մերօրյա չափորոշիչներով, բայց ոչ միշտ են արտահանվում միջազգային ասպարեզ՝ մեզանում դեռևս պահպանվող լեզվական ու կազմակերպական խոչընդոտների պատճառով:

Երկրորդ՝ հայագիտության դիդակտիկ-ուսուցողական գործառույթի իրացման փոխարեն՝ անցած տարիներին ունեինք պարզունակ կրկնությունների ու հուզական զեղումների միջոցով աշակերտներին և ուսանողներին մատուցվող պիտանի ու անպիտան գիտելիքների կույտեր, որոնք խճողելով նրանց մտքերը, իսկ հաճախ էլ իրենց նկարագրական բնույթի պատճառով ամբողջովին զրկելով մտածելու ունակությունից, է՛լ ավելի էին խորացնում դպրոցներում ու բուհերում տիրող ինքնագործունեությունից բխող համընդհանուր իմացական ճահիճը,

Երրորդ՝ սեփական հիմքի վրա անընդհատ հարստացող մշակութային արժեքների ձեւավորման գործընթացի գիտական ապահովման խնդիրը անցած տարիներին մեզանում նենգափոխվել է ձևով՝ հակադիր, բովանդակությամբ՝ նույնական մշակութային կապկումների երկու փոխբացասող մեթոդաբանություններով, որոնցից մեկը ազգային մշակույթը փաստորեն նույնացրել է արևելյան մշակույթի պարզունակ նմանակումների, իսկ մյուսը՝ կիսամերկ երգչուհիների ճիչերի հետ՝ մոռանալով Արևմուտքի ու Արևելքի հատույթում անտիկ շրջանում ու միջնադարում հայկական քաղաքակրթության իրականացրած համադրական գործառույթը։

Չորրորդ՝ նման պայմաններում մեր արժեքների՝ պատմության, մշակույթի և այլնի պահպանության ու մատուցման փոխարեն դարձել ենք միասնական պանթյուրքական քարոզչամեքենայի կողմից հայկականության ոչնչացման գործընթացի լուռ ականատեսները։ Այդ խնդրի գիտական կողմն ապահովելու նպատակով Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում գործող, բայց Ադրբեջանի ԳԱ անդամ Շահին Մուստաֆաևի կողմից ղեկավարվող Թյուրքական ակադեմիան ու Թուրքիայի կողմից ֆինանսավորվող մյուս կառույցները վերջերս արմատապես փոխել են կոգնիտիվ պատեազմի իրենց ռազմավարությունները։

Գիտական հիմքերի վրա դրված կոգնիտիվ պատերազմի ներկա հանգրվանի հիմնական առանձնահատկությունը Հայաստանի Հանրապետության տարածքի ամբողջական գույքագրումն է ու նրա առանձին հատվածների մանավանդ՝ Սյունիքի մասին կեղծ գիտելիքների սեփական համակարգի միջազգային լեգիտիմացումը, ինչի արդյունքում արդեն իսկ համընդհանուր ճանաչում է ստացել «Զանգեզուրի միջանցք» չարաբաստիկ հասկացությունը, իսկ մյուս կողմից՝ սկսվել է Հայաստանի ու հայության խաղաղ կլանման լիովին նոր՝ մեթոդաբանության որդեգրումը, որը հիշեցնում է մեգրելների խաղաղ ուծացման վրացական փորձը։

Ուրեմն՝ մեր անկեղծ խոստովանությունն այն մասին, որ անցած 20 տարիների ընթացքում ոչինչ չի արվել հայագիտական համակարգի ձևավորման համար, չի արդարացնում այն իրողությունը, որ անցած վեց տարիներին նույնպես ոչինչ չի արվել այդ ուղղությամբ։ Ներկայումս գործ ունենք կոմայում գտնվող համակարգին թթվածին ներարկելու մակերեսային ու չհաշվարկված փորձերի հետ, որոնք հաճախ հակառակ արդյունքների են հանգեցնում։ Օրինակ՝ վերջերս ՀՀ իշխանությունների կողմից իրականացված աշխատավարձերի բարձրացումը արդեն հակառակ արդյունքն է արձանագրել։ Անցած տարիներին սոսկ որպես «թոշակ ստանալու» վայր դիտվող ակադեմիական հաստատություններում սկիզբ են առել հավասարարական սկզբունքներով իրականացվող կրճատումներ, որոնք հանգեցնում են դեռևս գործող և ունակ փոքրաթիվ գիտնականների դուրսմղմանը։ Մյուս նորամուծությունը՝ վերևից պարտադրվող ձևական, բայց ո՛չ բովանդակային արևմտականացումը, տեղի է ունենում

ոչ թե ըստ արժեքային ընտրության հիմնարար չափորոշիչների, այլ պարզ ընդօրինակումների միջոցով: Ուստի, քրդական պարերը որպես «ազգային արժեք» դիտարկող միջավայրի ձևական վեստերնիզացիան սպառնում է հակառակ ծայրահեղությամբ՝ գլոբալ հարթության վրա «կիրգիզի» կարգավիճակ ստանալու հեռանկարով: Վերջերս հայագետների շրջանում սկիզբ առած այս «կիրգիզա-քրդական պատերազմները» ցույց են տալիս, որ մեր հետխորհրդային «պահպանողականների» մեծամասնությունը ազգայինի հետ որևէ կապ չունեցող սովորական գավառամիտներ են, իսկ «լուսավորիչները»՝ արևմտյան չափորոշիչների պարզունակ կապկումների միջոցով մեզ իջեցնում են արևմտականացումը զրոյից սկսող «կիրգիզի» մակարդակի: Այսինքն՝ նրանց պայքարն ընթանում է ոչ թե բովանդակության, այլ ձևի փոփոխության տիրույթում:

Համակարգի բարեփոխման բանալիները: Առկա գիտական ու կրթական ինստիտուտների խարխլված վիճակի և վարչակարգից պետություն դառնալու փորձերի դանդաղման ու տեղապտույտի պայմաններում հայագիտության գործառույթները վերականգնելու համար հարկավոր է սահմանել առաջանցիկ նպատակներ[1], որոնք դուրս են կաթվածահար եղած համակարգից և ստեղծել դրանց իրացման մրցակցային դաշտեր ու նրանցում գործող հետազոտական խմբեր՝ վերը նշված չորս գործառույթներից յուրաքանչյուրում:

Մեզ իրավունք չվերապահելով հայագիտության առաջին երեք գործառույթների վերաբերյալ կոնկրետ առաջարկներ ներկայացնելու հավակնությունը, մեզ վերաբերող գիտաճանաչողական գործառույթի իրացման ներկա պահի առաջնահերթություններն ենք համարում՝

Ա) Հայագիտական արտադրանքի գնահատման չափորոշիչների մշակումը և դրանք ներդնող ոչ մեծ Ազգային անկախ փորձագիտական կենտրոնի հիմնումը, որը պետք է զերծ մնա առկա ինստիտուցիոնալ համակարգից որևէ կախվածությունից:

Բ) Գնահատման բովանդակային չափորոշիչներից կարևորագույնը վերջին մեկ ու կես հարյուրամյակի հումանիտար գիտությունների արդյունքները ներառող տեսության ու մեթոդի մշակումն է՝ հայագիտական առարկաներից յուրաքանչյուրում:

Գ) Հայագիտության արդյունքների ճիշտ մատուցման կարևոր պայման է նոր երկլեզվության սկզբունքի ներդրումը՝ որպես սեփական «արտադրանքի» իրացման գործիքակազմ, բայց ո՛չ հայերենին փոխարինող օղակ: Առանց սեփական լեզվական հիմքի պահպանման՝ մեխանիկական անցումն անգլերենին ավելի վտանգավոր է, քան

[1] Այդ նպատակների՝ պատմագիտությանը վերաբերվող բաժինը կներկայացնենք եզրակացությունների ու առաջարկությունների մեջ:

թարգմանության միջոցով՝ արժեքների փոխանցումից հրաժարումը: Ի վերջո, նախ պետք է ստեղծել արժեքը ու հետո՝ մտածել նրա արտահանման մասին:

Դ) Մյուս կարևոր պայմանը հայագիտության հինգերորդ կամ՝ քաղաքակրթական գործառույթի սահմանումն է, քանի որ Թյուրքական ակադեմիայի գործունեության կտրուկ ակտիվացումից հետո մեր ակադեմիայի կազմում գործող «Գեղարդ» հիմնադրամի միջոցով և այլ եղանակներով կատարվող մանր-մունր քայլերը որևէ արդյունք չեն տալիս և չեն էլ կարող տալ: Ի վերջո, դրանք կրկնում են խորհրդային ու հետխորհրդային շրջանին բնորոշ «կենտրոնին» կամ «արբիտրին» դիմելու հայտնի գործելակերպը, մինչդեռ անկախացումից հետո «կենտրոնը» հենց մենք ենք: Կոմայից դուրս չեկած համակարգից ավելի մեծ զառամախտ չի էլ կարելի սպասել: Մինչդեռ, Թյուրքական ակադեմիայի միջոցով ստեղծվող գիտելիքները, դասագրքերը և այլն պարտադիր են դառնալու առնվազն՝ Թուրան նախագծի շրջանակում գործող երկրների համար:

Սա նշանակում է որ մենք պարտավոր ենք գործել որպես Թուրքիայից մինչև Ղըրղըզստան ձգվող Թյուրքական ակադեմիայի գործառութային դաշտից ավելի հզոր հնդեվրոպական կամ արիական ժողովուրդների կողմից փուլ առ փուլ կերտված գլոբալ քաղաքակրթության տարածաշրջանային հենակետ, որը կապող օղակ է նրա երկու՝ արեւելյան ու արեւմտյան նժարների միջեւ: Այսօր աշխարհում առկա ընդամենը մեկ գլոբալ քաղաքակրթությունը ստեղծել են հնդեվրոպացիները՝ սկսած ժամանակակից ըմբռնումով պետություն կերտած առաջին ազգից՝ պարսիկներից մինչև հին հույներ, հռոմեացիներ ու գերմանացիներ: Համաշխարհային քաղաքակրթությանը մարտահրավեր նետող Թուրան նախագծին կարող է դիմակայել հնդեվրոպացիների պատմական միջուկի բացահայտումն ու համախմբումը՝ Հնդկաստանից ու Իրանից մինչև ռոմանա-գերմանական աշխարհ: Դա թույլ կտա չեզոքացնել Թուրան նախագծի՝ գլոբալ ռեգիոնի վերածվելու հնարավորությունները: Նման հեռանկարն ունի իր աշխարհաքաղաքական ու տնտեսական ասպեկտները՝ Հնդկաստան – Իրան – Հայաստան – Վրաստան – Եվրոպա կոմունիկացիոն առանցքը, որը քաղաքակրթական առումով կարելի է դիտարկել մի կողմից՝ որպես հնդեվրոպական կամ արիական ժողովուրդների մշակութային ընդհանրությունների բացահայտման, մյուս կողմից՝ հայկական մեսիանիզմի համադրույթի [Հովհաննիսյան, 1957, գլուխ առաջին] միջոցով՝ մեր եվրոպամետ-քրիստոնեական արժեքների վերականգնման գիտական առաջադրանք:

«Թուրան» նախագիծը խաղաղ ճանապարհով կլանելու է մեզ՝ հայերիս վերածելով թուրքական սուբէթնոսի՝ որակյալ թուրքերի, ինչպես դա «բարեկամաբար» արել են վրացիները՝ մեգրելների հետ, եթե մենք չստեղծենք այն չեզոքացնող մեր սեփական գլոբալ ռեգիոնը՝ այն ինտեգրացիոն նախագիծը, որը հատելով Թուրանի ճանապարհը՝ անխուսափելի կդարձնի Թուրքիայի մեկուսացումն ու Ադրբեջանի քայքայումը: Նման ռեգիոնի ձևավորման առաջադրանքն անվերապահորեն արժանանալու է գլոբալ

քաղաքականության ճարտարապետների ու տարածաշրջանում Թուրքիայի հետ մրցող տերությունների հավանությանը: Ուստի հայագիտությունը պետք է դուրս գա իր ներփակ դրությունից, որպեսզի մեզանում դարաշրջանային կերպավորում ունեցող ազգայինն ու ազգայնությունը[1] պարզունակորեն գավառամիտ լեզվակռվի առարկա լինելու փոխարեն ձեռք բերի նոր՝ քաղաքակրթական բովանդակություն:

Ամփոփում և առաջարկություններ: Հայագիտությունն պետք է սկսի իրականացնել իր քաղաքակրթական գործառույթը՝ ուսումնասիրության ու քարոզչության առարկա դարձնելով՝ հայոց պատմության, լեզվի ու հայկական մշակույթի հետ անխզելիորեն կապած հետևյալ գիտաթեմաները.

- հնդեվրոպացիների ծագման ու նրանց նախահայրենիքի հարցը,
- հնդեվրոպացիները որպես առանցքային ժամանակում [Ясперс К., 1991] ձևավորված գլոբալ քաղաղակրթության հիմնաքարի՝ պատմական ամբողջի միջուկ,
- Հայաստանի պարսկա-հելլենական անվանակոչում Արմինա-Արմենիան՝ որպես հնդեվրոպացիների (արիացիների) միասնության խորհրդանիշ,
- պատմական ամբողջը՝ հելլենիզմի դարաշրջանում և նրա առանցքային դերը՝ քրիստոնեական աշխարհի ձևավորման ու քաղաքակրթության զարգացման գործում,
- հայոց դարձի և հայ եկեղեցու հավատո հանգանակի աշխարհաքաղաքական ասպեկտները,
- քրիստոնեական աշխարհի ընդարձակումը դեպի արևմուտք ու նրա հիմնաքարի վերականգնման փորձերը խաչակրաց արշավանքների շրջանում,
- հայկական մեսիանիզմի ծնունդը և նրա ազդեցությունը հայ ազատագրական պայքարի եվրոպական արևելումի ձևավորման վրա,
- եվրոպական լուսավորականությունը՝ որպես գլոբալ քաղաքակրթության զարգացման երրորդ հանգրվան և ժամանակակից հայ ազգի ձևավորման գաղափարական հիմնաքար,
- հայկական լուսավորականությունը՝ որպես սեփական քաղաքակրթական պորտալարի վերականգնման փորձ,

[1] Վերջին դարերի մեր քաղաքական մտքի հսկաները (Նալբանդյան, Ռաֆֆի, Վարանդյան) մերժել են «ազգայնականություն» հասկացությունը՝ հիմնվելով ֆրանսիական հեղափոխական մտքից բխող և ազգ-պետություն առաջադիմական կոնցեպտը հիմնավորող ազգայնության սկզբունքի (Le principe des nationalités) վրա: Մինչդեռ վերջին երեսնամյակում այդ սկզբունքն անհասկանալի է մնացել ինչպես ազգայնականությունը պաշտպանողների, այնպես էլ նրա դեմ պայքարողների համար: Դրա վերջին վկայությունն է ազգ-պետության խորապես արևմտյան կոնցեպտից բխող հասկացութային համակարգի առաջին բաղադրատարրի մերժումը արևմտամետ համարվող իշխանությունների կողմից:

- հայ ազատամարտի գաղափարաբանության՝ ազգային գաղափարախոսության եվրոպական-լուսավվորական ակունքները և դրանց նենգափոխման խորհրդային ու հետխորհրդային փորձերը,
- Հայաստանի առաջին և առայժմ միակ Հանրապետությունը՝ որպես հայոց քաղաքակրթական արևելումի դասական բնորդ։

Գրականության ցանկ

Khudinyan 2004 - Khudinyan G., Hayagitut'yuny 21-rd darum. Mas arrajin. Azgayin shahery yev hayagitut'yan npataknery mrts'akts'ayin nor mijavayrum, «21-RD DAR», Ye., 2004, N 3, ej 24-42. **(in Armenian)**

Hovhannisyan 1957 - Hovhannisyan Ashot, Drvagner hay azatagrakan mtk'i patmut'yan, girk' 1, Ye., 1957, glukh arrajin. **(in Armenian)**

Yaspers 1991 - Yaspers K., Istoki istorii i yeye tsel', v kn. «Smysl i naznacheniye istorii», M.: «Politizdat», 1991 s. 32-37. **(in Russian)**